



## **ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

### **Իշխանությունները պետք է ականջալուր լինեն ողջ աշխարհով մեկ կոռուպցիայի դեմ ավելի ու ավելի բարձրաձայն հնչող բողոքներին**

**Երևան, 5 դեկտեմբերի, 2012 թ.:** Անցյալ տարի կոռումպացված իշխանությունների հանդեպ ահազնացող բողոքի ալիքը հանգեցրեց մի շարք երկրների առաջնորդների տապալմանը, բայց երբ իրավիճակը հանդարտվեց, պարզ դարձավ, որ կաշառակերության և իշխանության չարաչափման մակարդակները, ինչպես նաև գաղտնի գործարքների տարածվածությունը շատ երկրներում շարունակում են մնալ շատ բարձր մակարդակի վրա: Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման 2012 թ. համաթիվը (ԿԸՀ) ցույց է տալիս, որ կոռուպցիան շարունակում է իր կործանարար ազդեցությունն ունենալ աշխարհի շատ ու շատ երկրների հասարակությունների վրա:

ԿԸՀ 2012 թ. դասակարգման աղյուսակում ընդգրկված 176 երկրների երկու երրորդի ԿԸՀ մեծությունը 0-ից 100 (որտեղ 0-ն նշանակում է բացարձակ կոռումպացված, իսկ 100-ը՝ բացարձակ մաքուր ընկալվող ոլորտ կամ կառույց) սանդղակով 50-ից ցածր է, ինչը ցույց է տալիս, որ պետական կառույցները պետք է ավելի թափանցիկ լինեն, իսկ ազդեցիկ պաշտոնյաներն՝ ավելի հաշվետու:

«Իշխանությունները պետք է հանրությանն առնչվող բոլոր որոշումների կայացման մեխանիզմների մեջ ինտեգրեն հակակոռուպցիոն միջոցառումներ:

Առաջնահերթությունների թվում են լոբբինգի և քաղաքական ֆինանսավորման ավելի լավ կանոնները, հանրային ծախսերն ու գնումներն ավելի թափանցիկ, և պետական մարմինները՝ հանրության համար ավելի հաշվետվողական դարձնելը», - նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության Նախագահ տիկին Յուլգետ Լաբելը:

«Ակնկալում ենք, որ կոռուպցիայի՝ մեկ ամբողջ տարի ուշադրության կենտրոնում լինելուց հետո իշխանությունները ողջ աշխարհում ավելի կոշտ դիրքորոշում կցուցաբերեն պաշտոնեական դիրքի չարաչափման նկատմամբ: Կոռուպցիայի ընկալման 2012 թ. համաթիվի արդյունքները ցույց են տալիս, որ հասարակությունները շարունակում են բարձր գին վճարել կոռուպցիայի դիմաց», - ասել է Յ. Լաբելը:

Մերձավոր Արևելքից մինչև Ասիա և Եվրոպա շատ երկրներ, որոնց քաղաքացիները կոռուպցիան վերջ տալու մարտահրավեր էին նետել իրենց իշխանություններին, ԿԸՀ դասակարգման աղյուսակում գրանցել են իրենց ցուցանիշի լճացում կամ վատթարացում:

### **Կոռուպցիայի ընկալման 2012 թ. համաթիվը. արդյունքներ**

Շնորհիվ տեղեկատվության մատչելիության և հանրային պաշտոններ զբաղեցնողների վարքագիծը կանոնակարգող կանոնների՝ Կոռուպցիայի ընկալման 2012 թ. համաթիվով Դանիան, Ֆիլիպինները և Նոր Չեխիան 90-ական միավորով հանդիսանում են դասակարգման աղյուսակի առաջատարներ:

Աֆղանստանը, Յուսիսային Կորեան և Սոմալիս այս անգամ ևս հանգրվանել են դասակարգման աղյուսակի ստորին հորիզոնականներում: Այդ երկրներում հանրությանը հաշվետու ղեկավարության և արդյունավետ հանրային հաստատությունների բացակայությունը շեշտում է կոռուպցիայի դեմ պայքարում ավելի խիստ մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը:

Կոռուպցիայի ընկալման 2012 թ. համաթվի ցածր արժեքներ ունեն սաև եվրագոտու այն երկրները, որոնք առավել շատ են տուժել ֆինանսական և տնտեսական ճգնաժամի արդյունքում: Թրանսփարենսի Ինթերնեշնլը շարունակաբար զգուշացնում էր Եվրոպային՝ ուշադրություն դարձնել հանրային հատվածի կոռուպցիոն ռիսկերի վրա՝ հաղթահարելու համար ֆինանսական ճգնաժամը՝ կոչ անելով ավելի մեծ ջանքեր գործադրել հանրային հաստատությունները կոռուպցիայից զերծ պահելու նպատակով:

«Կոռուպցիան աշխարհում ամենաշատ արժարժվող հիմնախնդիրներից մեկն է», - ասում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի գործադիր տնօրեն պարոն Կոբուս դե Սվարդը: «Աշխարհի առաջատար տնտեսությունները պետք է առաջատար լինեն իրենց օրինակով՝ ապահովելով իրենց հաստատությունների լիակատար թափանցիկությունը և առաջնորդների հաշվետվողականությունը: Դա ունի վճռական նշանակություն, քանի որ այդ երկրների հաստատությունները կարևոր դեր են խաղում կոռուպցիայի գլոբալ տարածումը կանխարգելելու գործում», - նշում է պարոն դե Սվարդը:

\*\*\*\*

Խորհրդային Միության նախկին 15 հանրապետություններից ԿԸՀ իր բարձր ցուցանիշով շարունակում է առանձնանալ Եստոնիան, որն իր ԿԸՀ 64 համաթվով դասակարգման աղյուսակում ընդգրկված 176 երկրների մեջ գրավում է 32-րդ տեղը և շարունակում է մնալ ոչ միայն նախկին ԽՍՀՄ, այլև նախկին կոմունիստական երկրների մեջ կոռուպցիայից առավել մաքուր պետությունը:<sup>1</sup> Հայաստանի ԿԸՀ այս տարվա համաթիվը հավասար է 34-ի (այդ համաթվով նա կիսում է 105-ից 112-րդ տեղերը) և այդ ցուցանիշով այն նախկին խորհրդային հանրապետությունների մեջ, բացի երեք մերձբալթյան հանրապետություններից, զիջում է նաև Վրաստանին<sup>2</sup> և Մոլդովային, որոնց այս տարվա ԿԸՀ արժեքները հավասար են համապատասխանաբար 52-ի և 36-ի և նրանք զբաղեցնում են ԿԸՀ դասակարգման աղյուսակի համապատասխանաբար 51-52-րդ և 94-101-րդ տեղերը: Հայաստանի մյուս հարևաններից, ինչպես և նախկինում, նրանից ավելի բարվոք վիճակում է գտնվում Թուրքիան (ԿԸՀ արժեք՝ 49, գրաված տեղը՝ 54-57), իսկ Իրանն (ԿԸՀ արժեք՝ 28, գրաված տեղը՝ 133-137) ու Ադրբեջանն (ԿԸՀ արժեք՝ 27, գրաված տեղը՝ 139-143) ավելի վատ դիրքերում են:

## **Ծանոթագրություն**

*Այս տարի Թրանսփարենսի Ինթերնեշնլը կատարելագործել է Կոռուպցիայի ընկալման 2012 թ. համաթվի հաշվարկման իր մեթոդաբանությունը: Այդ փոփոխությունն արտացոլելու նպատակով Կոռուպցիայի ընկալման համաթիվը ներկայացված է 0-ից (բացարձակ կոռումպացված) 100-ի (բացարձակ մաքուր) սանդղակում:*

###

Թրանսփարենսի Ինթերնեշնլը կոռուպցիայի դեմ պայքարող քաղաքացիական հասարակության առաջատար համաաշխարհային կազմակերպություն է:

<sup>1</sup> ԿԸՀ հաշվարկի մեթոդաբանության մեջ կատարված փոփոխության պատճառով (տե՛ս նաև ստորև), ԿԸՀ այս տարվա տվյալները համեմատելի չեն նախորդ մյուս տարիների տվյալների հետ:

<sup>2</sup> Հարկ է նշել, որ Վրաստանն իր այս տարվա համաթվով գերազանցում է նույնիսկ ԵՄ մի շարք երկրներին, մասնավորապես Չեխիային (49), Լատվիային (49), Սլովակիային (46), Ռումինիային (44), Բուլղարիային (42), Բուլղարիային (41) և Հունաստանին (36):